«ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՔՈԼԵՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2023

Հաստատված է
« Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և
արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի
2023թ. սեպտեմբերի 11-ի N6/2023 որոշմամբ:

Հայաստանում միջին մասնագիտական կրթության զարգացման գործընթացներն ու հեռանկարները անհրաժեշտ է դիտարկել երկրի զարգացման և տնտեսական կայունության ու մրցունակության ապահովման համատեքստում:

Մասնագիտական կրթության քաղաքականության, Քոլեջի կանոնադրական գործառույթների ու մրցունակ ռազմավարական զարգացման ծրագրի արդյունավետ իրականացումը պետք է նպատակաուղղված լինի՝

- որակյալ և մրցունակ մասնագետների պատրաստման ու մասնագիտական զարգացմանը,
- աշխատաշուկայի կարիքների բավարարմանը և հասարակության կայուն զարգացմանը,
- մասնագետների և մանկավարժական կադրերի գործառութային գրագիտության, կրթական, հասարակական, հետազոտական, նորարարական և ստեղծագործական գործունեության խթանմանն ու արդյունավետության բարձրացմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում միջին մասնագիտական կրթական համակարգերի մրցունակության շարունակական ապահովմանը,
- քոլեջի ինքնավարության (ակադեմիական, վարչարարության, կառավարման և ֆինանսական) ընդլայնմանը,
- Քոլեջի ֆինանսական կայունության ապահովման կառուցակարգերի մշակմանը և գործառմանը,
- երկրի մրցունակության բարձրացմանը, գիտելիքահենք տնտեսության զարգացմանը և կայունության ապահովմանը.
- քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու շարունակական զարգացմանը,
- ազգային ինքնության պահպանմանը(հայապահպանությանը) և զարգացմանը:

Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջում կառավարումն իրականացվում է համալիր ձևով, որի արդյունավետության բարձրացմանն են ուղղված քոլեջի ստորաբաժանումների աշխատանքները:

Քոլեջի կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի հիմնական ուղղություններն են՝

- վարչարարությունը,
- ուսումնական գործընթացը,
- ուսանողների ընդունելությունը,
- որակի ներքին ապահովման համակարգը,
- ֆինանսների կառավարումը,
- նյութատեխնիկական բազայի արդիականացումը,
- ստորաբաժանումների աշխատանքների գնահատումը և բարելավումը:

Քոլեջում ինքնավարությունը ակադեմիական (կրթական, հետազոտական), կազմակերպական, գործառնական, ինչպես նաև մարդկային, գույքային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների կառավարման գործընթացների վերաբերյալ Քոլեջի ներքին որոշումների կայացման, որոշումների և հանձնարարականների ամբողջությունն է:

Քոլեջը, լինելով ինքնավար, ամբողջովին կրում է իր կատարողականի արդյունավետության ու որակի ապահովման պատասխանատվությունը:

Քոլեջի արդյունավետ ռազմավարական կառավարումը անմիջականորեն կապված է իր ինքնավարության հետ, որի ապահովման արդյունքում կարող է զգալի կերպով բարելավել ինստիտուցիոնալ կարողություններն ու խթանել միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացումն ու կրթական բարեփոխումների իրականացումը:

Արդյունավետության գնահատման մեխանիզմներն ու գործիքները

Քոլեջում կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար կիրառվում են մի շարք մեխանիզմներ՝

▪ գործող ՌԶԾ-ի գործողությունների վերջնարդյունքների գնահատման առանցքային ցուցիչներ (հաշվետվություններ)

▪ ստորաբաժանումների տարեկան կատարողականների նոր ձևաչափ,

▪կատարողականների վերլուծությունների հիման վրա բարելավման միջոցառումների մշակման համակարգ

▪Քոլեջի գործունեության տարեկան կատարողական զեկույց,

▪ ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվող հարցաթերթիկային հարցումներ,

▪ Կառավարման և խորհրդակցական մարմինների որոշումներ,

▪ դիմորդների թվաքանակի ավելացման միջոցառումներ,

▪ ֆինանսական ռեսուրսների կայունություն:

Քոլեջում կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար կիրառվում են հետևյալ գործակիցները՝

▪ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպում- քննարկումներ,

▪ ներքին և արտաքին շահակիցների համար մշակված հարցաթերթիկներ,

▪ ՈԱ պատասխանատուի կողմից անհրաժեշտ խորհրդատվություններ,

▪ խմբային քննարկումներ,

▪մանկավարժական խորհրդի նիստեր,

▪շրջանավարտների արձագանքներ,

▪ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն,

▪արտաքին գնահատում: